

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ/ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

ԻՆՔՆՈՒՐՈՒԹՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝

ՄԱՐՏՈՒՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀԱՍՄԻԿ ԲԵՅՆՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻԶ՝

ՄԱՐԻԱՄ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԴՊՐՈՑ՝

«ԱՍՏՂԱԶՈՐ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՄԱՐՏՈՒՆԻ 2023

Բովանդակություն

Ներածություն	3
Գրական ակնարկ	4
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման նպատակները	8
SZS-ի կիրառման դրական և բացասական կողմերը	9
Ինֆնուրույն աշխատանքի էությունը	10
Փորձարարական հետազոտություն	10
Փորձարարական դաս 1	12
Փորձարարական դաս 2	13
Հանրակրթական «Շախմատ»առարկայի ուսուցման նպատակ	15
Եզրակացություն	17
Դասի պլան	19

Ես չեմ վախենում իմ հակառակորդներից շախմատային խաղատախտակի առջև:
Բայց միշտ մեծ հարգանքով եմ վերաբերվում իմ բոլոր խաղընկերներին:

Տիգրան Պետրոսյան

Ներածություն

Կարևորելով տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիայի կիրառման անհրաժեշտությունը արդի ժամանակներում, տեխնոլոգիայի միջոցով ստացվող ինֆորմացիայի անսահմանությունը և ՏՀՏ-ի տարածումն ու օգտագործումը աշակերտների շրջանում, որոշեցի հետազոտական թեմա ընտրել տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով ինքնուրույն աշխատանքի զարգացումը: Քանի որ յուրաքանչյուր սերունդ ինքն է թելադրում մեթոդը, որով հնարավոր է սովորեցնել, կարծում եմ, այս պարագայում աշակերտների մոտիվացիայի բարձրացման տարբերակ է տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հենց շախմատ առարկաների ժամ:

Նկատի ունենալով այն փաստը, որ մեր ժամանակներում ամենաթարմ տեղեկատվությունն անգամ կես ժամ հետո կարող է հնանալ, պարզ է դառնում, որ նման հասարակության մեջ ապրելու և հաջողության հասնելու համար աշակերտը պետք է կարողանա նախ ճկուն կերպով հարմարվել փոփոխվող պայմաններին և ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել: Դրա համար նա պետք է կարողանա ստեղծագործաբար ու քննադատորեն մտածել, ինքնուրույն խնդրի լուծման ուղիներ գտնել ու որոշումներ կայացնել, տեղեկատվության հետ աշխատելու հմտություն և համակարգչային գրագիտություն ձեռք բերել:

Այս հետազոտական աշխատանքը միտված է բացահայտելու և ներկայացնելու աշակերտների մեջ ձևավորված արժեքները: Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ

դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, հայրենասեր մարդ դաստիարակելն է: Այս բոլոր արժեքները անձի ձևավորելու գործում կօգնի և կնպաստի «Ճախմատ» առարկայի ուսուցումը դպրոցում:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Փաստ է, որ 21-րդ դարը համարվում է տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջան: Ավանդական մեթոդներին փոխարինելու են գալիս ժամանակակից մեթոդներ, նորարական հնարներ, որոնք հեշտացնում են դասավանդողի աշխատանքը ու հետաքրքրությունն առաջացնում դասավանդվողների շրջանում:

ՏՅՏ-ների օգտագործման հնարավորությունների շառավիղը բավականին լայն է: Փաստ է, որ ներկա օրերում աշակերտի առօրյայի անբաժան մասն է կազմում համակարգիչը, հեռախոսը, ու ուսուցչի դերը՝ որպես ուսուցանող, կայանում է նրանում, թե ինչպես հնարավոր է տեղեկատվական տեխնոլոգիան զուտ խաղային օբյեկտից դարձնել ուսման բաղադրիչ մաս: Տեղեկատվական տեխնոլոգիայի կիրառումը ուսումնական գործընթացի ընթացքում առաջին հերթին պետք է խթան հանդիսանա սովորողների ճանաչողական կարողությունների ակտիվացման, ուսումնական նյութի հաջող յուրացման համար և նպաստի սովորողի որոշակի որակների զարգացմանը: Հետևաբար, ՏՅՏ-ն պետք է կատարի որոշակի կրթական գործառույթ, օգնի երեխային կողմնորոշվել տեղեկատվության հեղեղի մեջ, ընկալել այն, հիշել, և ոչ մի դեպքում չվնասել առողջությունը: ՏՅՏ միջոցները պետք է գործեն որպես ուսումնական գործընթացի օժանդակ տարր, այլ ոչ հիմնական: Այսօր աշխարհում, մեր հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, այդ թվում նաև տեխնոլոգիական հեղափոխությունը, փոխում են կրթության նկատմամբ ձևավորված մոտեցումները, հարաբերությունները, սուբյեկտներն ու օբյեկտները. Այս գործընթացում տեխնոլոգիաներն ունեն.

- գործիքի դեր, որոնք կօգնեն են արագացնելու այն, ինչ արվում էր դանդաղ,

- տեղեկատվական աղբյուրի դեր, գտնելու համար այն տեղեկությունը, որը ժամանակին անհասանելի էր թվում,
- ուսուցման օբյեկտի դեր, ցուցադրելով այն, ինչ առաջ անտեսանելի էր, կամ ցուցադրման համար անհնար,
- հաղորդակցման նոր միջոցի դեր, որը, ինտերակտիվ համագործակցելով սովորողի հետ, կապում է բոլորին՝ ստեղծելով համաժամանակյա և ոչ համաժամանակյա հաղորդակցության հնարավորություն:

Չափի առնելով դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները, ՏՐՏ-ների հետ աշխատանքը պետք է հստակ մտածված և չափավորված լինի: Այդպիսով, ՏՐՏ-ի օգտագործումը դասին պետք է կրի նուրբ բնույթ: Ուսուցիչը, դասին նախապատրաստվելիս պետք է հանգամանորեն մտածի ՏՐՏ-ի օգտագործման նպատակի, տեղի և ձևի մասին:

ՏՐՏ-ների օգտագործման հիմնական առանձնահատկությունները, որոնք կօգնեն ուսուցչին դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակի.

- դիդակտիկ նյութերի ստեղծում և նախապատրաստում /առաջադրանքների տարբերակներ, աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, ցուցապաստառներ և այլն/
- ուսումնական նյութի վերաբերյալ պրեզենտացիայի /շնորհանդես/ ստեղծում
- պատրաստի ծրագրային արտադրանքի օգտագործում
- դասին նախապատրաստվելու, արտադասարանական միջոցառումների, ինքնակրթության համար ինտերնետ ռեսուրսների փնտրում և օգտագործում կրթության և դաստիարակության արդյունքներին հետևելու համար մոնիթորինգի ստեղծում
- տեքստային աշխատանքների ստեղծում
- մեթոդական փորձի ընդհանրացում էլեկտրոնային տեսքով¹:

¹ Նախաշավիղ, 5.2017, էջ 55:

ՏՅՏ-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա-հուզական ֆոնի վրա:

Սուլտիմեդիան նյութի և գործընթացների ներկայացումն է ոչ թե ավանդական տեքստային նկարագրությամբ, այլ ֆոտոնկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ: Դասի անցկացումը մեդիայի շնորհիվ գրավում է դպրոցականներին: Այդ տիպի դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, որի ժամանակ երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով, հաճույքով են կատարում առաջադրանքները, ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Հետևաբար, արդյունավետ ուսուցման գործընթացում պարտադիր է տեքստի, խոսքի ուղեկցումը պատկերներով:² Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ունի երկու տիպի առավելություն՝ որակական և քանակական: Որակական առումով նոր հնարավորությունները ակնհայտ են, եթե ուղղակի համեմատենք բանավոր նկարագրությունները տեսաձայնային ներկայացման հետ: Քանակական առավելությունները արտահայտվում են նրանով, որ մեդիամիջավայրը անհամեմատելի մեծ է տեղեկության խտությամբ: Իսկապես, տեքստի 1 էջը դասավանդողը արտաբերում է 1-2 րոպեի ընթացքում: Այդ նույն րոպեի ընթացքում լայնեկրան տեսանյութը բերում է ինֆորմացիայի ավելի մեծ ծավալ:

- Հաստատված է, որ նյութի բանավոր մատուցման ժամանակ սովորողը թույլ է ընկալում և ընդունակ է վերլուծելու մինչև հազար պայմանական միավոր:

² Խաչատրյան Ա., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Հեբեռտ հիմնադրամ, Հայաստան 2020, էջ 18:

Տեղեկատվական տեխնոլոգիան կարող է օգտագործվել ուսուցման գործընթացի բոլոր փուլերում.

- Նոր նյութի բացատրում
- Ամրապնդում
- Կրկնություն
- Գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ստուգում
- Գնահատում

Տեղեկատվական տեխնոլոգիաներով ուսուցման միջոցները անվանում են ինտերակտիվ, որոնք ունեն աշակերտի և ուսուցչի գործողություններին արձագանքելու, նրանց հետ երկխոսության մեջ մտնելու կարողություն:

Ամերիկացի հայտնի հոգեբան Ալան Քոլինզը առանձնացնում է դասավանդման մեթոդիկայի ութ քայլ, որոնցից յուրաքանչյուրը կարելի է լավագույնս կիրառել տեխնոլոգիաների օգնությամբ.³

1. Ամբողջ դասարանի հետ աշխատանքից անցում փոքր խմբերի հետ աշխատանքին
2. Դասախոսությունից կամ տեղեկատվություն հաղորդելուց անցում դեպի նյութն ինքնուրույն յուրացնելուն աշակերտներին օժանդակմանը
3. Միայն ուժեղ աշակերտների հետ աշխատանքից անցում նաև թույլերի հետ աշխատանքին
4. Անցում դեպի հնարավորինս շատ աշակերտների ընդգրկում դասապրոցեսում

³ Աստվածատրյան Մելանյա, Թորոսյան Արտաշես, Շարխաթունյան Հայկ, Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Ասողիկ հրատարակչություն, Երևան 2004, էջ 70:

5. Թեստային առաջադրանքերի գնահատումից անցում դեպի աշխատանքի արդյունքների, առաջընթացի և ջանքերի գնահատում
6. Մրցակցությունից անցում դեպի համագործակցություն
7. Միօրինակությունից, երբ աշակերտները նույն բանն են սովորում, անցում դեպի բազմազանություն, երբ տարբեր աշակերտներ տարբեր բաներ են սովորում,
8. Անցում գուտ բառաին մտածողությունից դեպի տեսողական ու բառային մտածողությունների ինտեգրմանը.
Վերոնշյալ կետերը ցույց են տալիս այն կարևոր հնարավորությունները, որոնք իրականացվում են տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիայի միջոցով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման նպատակները`

- կրթական - սովորողների կողմից ուսումնական նյութի ընկալումը, ուսումնասիրության օբյեկտների կապերի և հարաբերությունների ըմբռնումը
- զարգացման- սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը, ընդհանրացնելու, վերլուծելու, համեմատելու հմտությունները, սովորողների ստեղծագործական գործունեության ինտենսիվացումը
- դաստիարակչական - գիտական աշխարհայացքի ձևավորում, ինքնուրույն և խմբային աշխատանքների հստակ կազմակերպման հմտություններ, ընկերության, փոխադարձ օգնության զգացումների դաստիարակում

- տեխնիկական-ուսումնասիրությունները ցույց են տվել, որ համաշխարհային շուկայում տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների թափուր տեղերը կազմում են շուրջ 2 միլիոն:

SRS-ի կիրառման ժամանակը ուսուցչի և աշակերտի դերը՝

- ✓ ուսուցիչը միայն ցուցադրում է
- ✓ ուսուցիչը մեկնաբանում է
- ✓ ուսուցիչը ուղղորդում է լրացուցիչ հարցերով
- ✓ աշակերտի անհատական աշխատանք
- ✓ աշակերտների խմբային աշխատանք
- ✓ աշխատանքի ժամանակ հետևել ժամանակին

SRS-ի կիրառման դրական և բացասական կողմերը.

Դեռևս չորրորդ դարում Եզնիկ Կողբացին չարի և բարու դուալիստական ըմբռնման ժամանակ դրանք տեսնում էր մարդու գործողություններում. Երկաթը մերթ ծառայեցվում է մերթ բարի բաների համար, մեկ չար. Եթե մեկը խոփ, բահ, գերանդի է պատրաստում, երկաթը բարի բաների համար է ծառայեցնում, եթե սուսեր, նիզիկ, նետ է սարքում, այսպիսով երկաթը չար գործ է կատարում: Այսպիսիով, որևէ առարկայի օգտակար ու վնասակար հատկանիշների մասին խոսելիս պետք նկատի ունենալ, թե որ տեսանկյունից են նրան վերաբերում: Յետևաբար, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները կարող են դրական և բացասական ազդեցություն ունենալ սովորողների վրա: << Լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել>> ասացվածքը վերաբերում է ուժեղ կողմին: Ցուցադրական-զննական նյութերի մատուցումը ավելի արդյունավետ միջոց է նյութի յուրացման համար: SRS-ի օգտագործումը օգնում է ժամանակը ճիշտ տնօրինել,

տեղեկատվական հեղեղի մեջ կարող ես աշակերտին ուղղորդել դեպի որոնման ճիշտ ուղիներ, համակարգչի ընկալում որպես տեղեկատվական աղբյուր, և ոչ թե խաղային տեխնոլոգիա: Այնուամենայնիվ, ՏՅՏ-ի անսարքությունը կարող է անակնկալի բերել ուսուցանողին և ուսումնառողին: ՏՅՏ-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա-հուզական ֆոնի վրա:

Ինքնուրույն աշխատանքի էությունը

Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, այն անձնային որակ է: Ինքնուրույնությունը, սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է: Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Փորձենք տարբերակել ինքնուրույնություն և ինքնուրույն աշխատանք եզրույթները. ինչպես արդեն նշեցինք, ինքնուրույնությունը անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը ուսումնական աշխատանքի ձև: Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց:

Կան ինքնուրույն աշխատանքի տարբեր տեսակներ

- Նոր գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք
- Նոր կարողություն և հմտություն ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք

- Ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներ

Փորձարարական հետազոտություն

Աշխատանքի նպատակն է ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար: Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավվածության բարձրացման համար քննարկվել են հարցադրման մի քանի ռազմավարություններ: Հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում: Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա:

Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը: Եթե հարցը լսելուց հետո աշակերտները չեն արձագանքում համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ուսուցիչը հաճախ պետք է փորձի առաջ տանել գրույցը՝ կրկնելով, վերաձևակերպելով հարցը կամ դիմելով աշակերտներին: Ավելի բարդ հարցերի դեպքում, որոնք պահանջում են բարդ կոգնիտիվ վերլուծություններ, հնարավոր է անհրաժեշտ լինի տրամադրել աշակերտներին 1-2 րոպե, նախքան պատասխանելը: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Արդյունքում աշակերտները զրկվում են հարցը «բռնելու» և իրենց սեփական պատասխանները ձևակերպելու հնարավորությունից, ինչը կարևոր գործընթաց է աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու համար: Անընդհատ 12 պատասխանելով հարցերին աշակերտների փոխարեն, ուսուցիչը անուղղակիորեն «ասում է», որ նորմալ է, որ նրանք չեն պատասխանում հարցերին, քանի որ ուսուցիչը ի վերջո ինքը կպատասխանի: Արդյունքում աշակերտների սովորելու և դասին մասնակցելու գործընթացը մասնակիորեն դադարեցվում է: Իրականացված հետազոտությունների շրջանակում պարզվել է, որ պատասխանին ավելի երկար սպասելով՝ գրանցում են հետևյալ հաջողությունները.

- Սովորողների պատասխաններն ընդարձակվում են:
- Ամբողջական նախադասություններ և վստահության ավելացում:
- Հայեցողական մտածողության դրսևորում:
- Ավելանում են սովորողի հարցերը և աշակերտների ակտիվությունը: Ուսուցիչները վերանայում են սովորողներից ունեցած ակնկալիքները:
- Անցում ուսուցչակենտրոն ուսուցումից սովորող-սովորող վարքի դրսևորումներին և ընդլայնում են հարցերի շրջանակը: Այսպիսով՝ ուսուցչի սպասման ժամանակի

ավելացումն ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որը նպաստավոր է վերլուծակա և քննադատական մտածողության զարգացման գործում:

Փորձարարական դաս 1

Ես իմ հետազոտական աշխատանքը կատարել եմ Գեղարքունիքի մարզի Աստղածոր գյուղի մ/դ-ում: Դասարանը ընտրել եմ 4-րդ դասարանը, թեման մարտավարական հնարքները: Թեմայի նկարագրության մեջ առավել մանրամասնել եմ դասի մեջ եղած արժեքները, որը մենք փորձում ենք ձևավորել աշակերտների մեջ: Թեման բավականին մատչելի էր և հեշտ ընկալվող այդ իսկ պատճառով թեման ամբողջովին հաղորդվեց աշակերտների մասնակցությամբ: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, ինչին հաջորդեցին դասի հիմնական նպատակին առնչվող մոտիվացիոն հարցադրումները: Աշակերտները նախորդ դասարանների դասանյութից իրենց իմացածը ամբողջացրին: Հարցադրումներ արեցի մատային դիրքերի, սկզբնախաղի կանոնների վերաբերյալ: Քննարկեցինք նաև շախմատ առարկայի դերն ու նշանակությունն մեր առօրյա կյանքում:

Թեման լինելով բավականի մատչելի՝ այն հաղորդվեց հարցադրումների մեթոդով ինչը ևս հնարավորություն տվեց ինձ ներգրավվել գրեթե բոլոր աշակերտներին դասապրոցեսի մեջ: Դասի հիմնական մասը կազմակերպեցինք մեթոդով: Բաժանեցի 4 խմբի: Սովորողները ընթերցեցին տրամագիրը և յուրաքանչյուր իր տրամագիրը դիրարկեց և բացատրեց իր ձևով: Թեմայի նկարագրության մեջ առավել մանրամասնել եմ դասի մեջ եղած արժեքները, որը մենք փորձում ենք ձևավորել աշակերտների մեջ:

Դասի թեման էր . մարտավարական հնարքներ:

Դասի սկիզբ՝ հիշեցին իրենց անցած մարտավարական հնարքները:

Դասի ընթացք՝ մտազրոհ մեթոդի կիրառում

Դասի ավարտ՝ եզրափակիչ հարցադրումների մեթոդ:

Դասի ավարտին իմ եզրահամգումը, որ աշակերտների մոտ դասի վերջում հնչած եզրափակիչ հարցերը կարող են դասի կշռադատման փուլի ամփոփումը ավելի արդյունավետ դարձնել: Դասի թեման աշակերտները յուրացրին և 7 աշակերտ միջինից բարձր գնահատական ստացան:

Փորձարարական դաս 2

Հաջորդ հետազոտական աշխատանքը ընտրել եմ ոչ պակաս արժեքային տարրեր պարունակող դասաթեմա` 4-րդ դասարանի դասագրքից: Թեմայի նկարագրության մեջ առավել մանրամասնել եմ դասի մեջ եղած արժեքները, որը մենք փորձում ենք ձևավորել աշակերտների մեջ:

Դասի թեման Էր-ճախմատի աշխարհի չեմպիոնները

Դասի սկիզբ` Սահիկաշարի միջոցով աշակերտները իմացան որոշ տեղեկություններ չեմպիոնների մասին

Դասի ընթացք` «առանցքային կետեր» մեթոդի կիրառություն

Դասի ավարտ` եզրափակիչ հարցադրումների մեթոդ:

Թեման 3-րդ դասարանի դասանյութից արդեն իրենց ծանոթ Էր: Հարցադրումների ու քննարկումների միջոցով աշակերտների իմացած գիտելիքները վեր հանեցի : Թեմայի համար ունեի հետևյալ նպատակադրումները

`

- Ճախմատի չեմպիոններից ով Է ավելի երկար պահպանել չեմպիոնության տիտղոսը

- ում խաղացած պարտիան Է ավելի հետաքրքիր եղել

- Այսօրվա դասի գիտելիքները սովորողները կօգտագործեն հիմք հետագայում չեմպիոնների մասին լրացուցիչ տեղեկություն իմանալու և իմացածը հարստացնելու համար :

SRS գործիքներ, որոնք կարելի է կիրառել շախմատի ժամին

Սահիկաշար

<https://www.youtube.com/watch?v=K7AAjcMtqJw>

Քանի որ արդեն կշեղ ենք տեսողական հիշողության ազդեցությունը երեխայի իմացական դաշտի վրա, այս գործիքի բազմիցս կիրառումը ապացուցել է, որ ոչ մի աշակերտ անտարբեր չի մնում սահիկաշարի միջոցով տրամադրվող տեղեկատվության հանդեպ. այս գործիքի միջոցով նոր նյութի հաղորդում կարելի է կազմակերպել, աշակերտները սահիկաշարի միջոցով ծանոթանում են շախմատի պատմությանը, չեմպիոնների կենսագրությանը:

ՔՈՒԻԶԻՍ

այս գործիքի միջոցով հնարավոր է դառնում կազմել վիկտորինաներ, թեստեր, որով շախմատի դասը դառնում է հետաքրքիր: Ի՞նչ է իրենից ներկայացնում այս գործիքը. Քուիզիզ գործիքով կազմում ենք թեստային աշխատանք, յուրաքանչյուր թեմայի ամփոփումը կարող ենք կատարել այս գործիքով. արդյունքում 5-10 րոպեում կատարում ենք թեմայի ամփոփում ու միանգամից արդյունքներն ամփոփվում են: Այս գործիքի համար բնականաբար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր երեխա նախապես տեղյակ լինի ու հեռախոսով ներկայանա դասի, քանի որ իրականացումը անհնար է առանց հեռախոսի կամ համակարգչի:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ «ՇԱԽՄԱՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿՊԱՏԱԿԸ

Դասընթացի նպատակը

Շախմատ առարկայի ուսուցման նպատակն է զարգացնել տարրական դպրոցում սովորողների՝ փոփոխվող, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու, դրանք գնահատելու և լուծման ուղիներ ու տարբերակներ գտնելու կարողություններ, խթանել նրանց որոնողական գործունեությունը, զարգացնել բազմատարբերակային (դիվերգենտ), այլընտրանքային, քննադատական և ստեղծագործական մտածողությունը:

«Շախմատ» առարկայի ընդհանուր բնութագիրը.

1. Շախմատը զարգացնում է մարդու մտավոր կարողությունները, այն ձևավորում է արդարամտություն և կատարելագործում է անհատի բնավորություն լավագույն գծերը՝ կամքի ուժը, վճռականությունը, համբերությունը, կարգապահությունը, հաղթանակի ձգտելու կամքը, օբյեկտիվությունը: Շախմատը ձևավորում և զարգացնում է անհատի գեղագիտական ճաշակը, այն պայթարում է նաը վատ երևույթների, բացասական զգացմունքների՝ վախի, անվստահության դեմ:⁴

«Շախմատ» առարկան նպաստում է սովորողների մոտ վերլուծական ու քննադատական, ստեղծագործական և այլընտրանքային մտածողության ձևերի զարգացման, կանխատեսելու կարողության, իրավիճակների ընթացքի վրա ազդելու ունակության ձևավորմանն ու զարգացմանը, երևակայության և ստեղծագործականության միջոցով՝ սովորելու կարողության խթանմանն ու կրթության արժևորմանը:

Սպորտի տեսանկյունից շախմատը զարգացնում է սովորողի կամային որակները, մինչև վերջ պայթարելու, օբյեկտիվ լինելու, ճիշտ գնահատելու, ինչպես նաև արժանապատիվ պարտվելու կարողություններ:

Արվեստի առումով շախմատը զարգացնում է աշակերտի ճաշակը, գեղեցիկը ընկալելու և գնահատելու կարողություններ: «Շախմատ» առարկայի դասավանդման հիմնական սկզբունքները շախմատային կրթության հասանելիության ապահովում, առարկայի ուսուցմանը սովորողների ակտիվ մասնակցություն, առարկայի ուսուցման գործնական ուղղվածությունը:

⁴ Հ.Թումանյանի Ուսուցչի ձեռնարկի Երևան 2011. էջ 3

«Շախմատ» առարկայի ուսուցումը տարրական դպրոցում ունի կրթական մեծ ներուժ, որը պայմանավորված է հետևյալ առանձնահատկություններով.

1) Շախմատը նպաստում է սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը:

2) Շախմատում զարգանում և կատարելագործվում է սովորողի երևակայությունը, վերլուծական կարողությունները՝ դրանով իսկ նպաստելով ուսումնական մյուս առարկաների ուսումնասիրմանը:

3) Շախմատում դրսևորվում է նպատակին հասնելու համար հետևողական և քրտնաջան աշխատանքի անհրաժեշտությունը, որը նպաստում է աշակերտի հոգևոր աշխարհի ձևավորմանը:

Շախմատը, պարունակելով գիտության, արվեստի և սպորտի տարրեր, աշակերտի մեջ զարգացնում է ինքնուրույն աշխատանքի միջոցով հաջողությունների հասնելու կարողություններ:

Գիտակցի և արժևորի շախմատի դերը երևակայության, տրամաբանական մտածողության, կամային որակների, դժվարին իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորման և զարգացման գործում,

➤ Գնահատի արդարությունն ու ազնվությունը,

➤ Կարևորի ուշադիր և կենտրոնացված աշխատանքը,

➤ Գիտակցի համագործակցված աշխատանքի կարևորությունը,

➤ Գիտակցի շախմատ առարկայի անհրաժեշտությունը մյուս ուսումնական առարկաների ուսումնասիրության համար

➤ Չետաքրքրություն հանդես բերի շախմատ առարկայի նկատմամբ, գեղագիտական արժեքներ հայտնաբերի շախմատային ստեղծագործությունների նկատմամբ, հրճվանքի զգացում ուեննա խնդիրներ լուծելիս:

➤ Ուեննա սեփական մտածելակերպի և կարողությունների նկատմամբ վստահություն,

➤ Գիտակցի շախմատ առարկայի կարևորությունը անձի հետազոտական գործունեության, ինչպես նաև ինտուիցիայի զարգացման համար,

➤ Գիտակցի շախմատային գիտելիքների կարևորությունը հիմնավորված որոշումներ կայացնելու խնդրում:

Շախմատային խնդիրների լուծման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել տարբեր մեթոդներ՝ բացառման, քայլի հերթափոխման, քայլի ընտրության, դիրքի մասնատման, դատողության, վերջից լուծման և այլն:⁵

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թեմայի վերաբերյալ հետազոտությունները ցույց տվեցին, որ 21-րդ դարում ակադեմիական գիտելիքները բավարար չեն որևէ բնագավառում հաջողության հասնելու համար. այսօր կարևորագույն նախադրյալ է տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությունը: Թեմայի ուսումնասիրությունը ցույց տվեց մի շարք դրույթներ.

⁵ Սամվել Միրտիկյան. ուսումնամեթոդական ձեռնարկ. Շախմատային առաջադրանքների լուծման մեթոդներ. էջ 5

- Յուրաքանչյուր սերունդ ինքն է թելադրում իր հետ աշխատելու մեթոդը, ու ներկայումս անհնար է հերքել, որ ոչ ոք անմասն չէ ՏՀՏ-ներից, ըստ այդմ անհրաժեշտություն է դառնում տեղեկատվական տեխնոլոգիան որպես գործիք աշխատեցնելը ուսումնառության ասպարեզում:
- Դասին ուսուցչի աշխատանքը դառնում է ուղղորդելը, հիմնական տեղեկատուն դառնում է ՏՀՏ-ն
- ապացուցված է, որ ավելի զարգացած է անհատի տեսողական հիշողությունը, ու մեղիա դասերը այդ հնարավորությունը ընձեռում են
- ՏՀՏ-ի օգտագործումը վստահություն է ներշնչում, եթե նախկինում աշակերտը վախենում էր սխալվելուց, ապա այս պարագայում նրա մոտ ձևավորվում է ինքնավստահություն, սխալվելը դառնում է դեպի գիտելիք տանող ճանապարհի հարթելի արգելք
- Աշակերտի մոտ զարգանում է ինքնուրույն աշխատանք կատարելու ցանկություն, ավելանում է պատասխանատվության զգացումը
- Համակարգիչը, հեռախոսը զուտ խաղային տեխնոլոգիայից վերածվում են գիտելիքի, տեղեկատվության հավաքագրման աղբյուրի
- Ինքնուրույն աշխատանքի շնորհիվ զարգանում է ինքնակրթության ու ինքնակատարելագործման կարողությունը
- ՏՀՏ-ի մի շարք գործիքներ թույլ են տալիս գիտելիքը ստուգել թեստային առաջադրանքների միջոցով, իսկ գնահատումը կատարվում է մեխանիկորեն. այս դեպքում վերանում է <<սուբյեկտիվ գնահատում>> հասկացությունը,
- Կատարվում է ժամանակի խնայողություն նաև գրավոր աշխատանքներ ստուգելու տեսանկյունից. նախկինում եթե ժամեր էին պահանջվում, գրավոր աշխատանքը ստուգելու, գնահատման սանդղակով համապատասխան գնահատում կատարելու համար, այժմ ՏՀՏ-ն տալիս է հնարավորություն առաջադրանքը հանձնելու պահին գնահատականը

տեսնել, սխալները վերանայել: Իսկ նախկինում հաճախ ժամանակի սղության պատճառով անդրադարձը կատարվում էր մասնակիորեն

- Հնարավոր է դառնում կառավարելի դարձնել ժամանակը.

Տեղեկատվությունը ուսուցանողի փոխարեն ստանձնում է ՏՀՏ-ն, իսկ ուսուցանողը կարող է վերահսկել ժամանակը:

ԴԱՄԻ ՊԼԱՆ

Դաս 2 Ծանոթություն շախմատի խաղատախտակի հետ 1ժ

Ուսուցիչ Մարիամ Մուսեղյան

Առարկա՝ ՇԱԽՄԱՏ		
Դասարան՝ 2-րդ	Ուս. տարի 2023-2024	

Դասի նպատակ	Ձևավորել պատկերացում Շախմատի մասին, ներկայացնել Շախմատի պատմությունը,
Դասի վերջնադրյալներ	Իմանան Շախմատի պատմությունը, անվանել և ցոլցադրել ծախմատի խաղաքարերը և խաղատախտակը:
Ընդհանրական խաչվող հասկացություններ	Անհատական և մեակուրային արտահայտում. Շախմատի մեակուրային և գեղագիտական արժեքի ընկալում:
Միջառարկայական կապեր	Մայրենի լեզու: Նորածանոթ հասկացությունները մտապահելու, սեփական մտքերը գրագետ արտահայտելու կարողություն: Արվեստ: Նորի ստեղծում
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագիրք, վարժությունների տետր, ցուցատախտակ, խաղատախտակ, խաղաքարեր, գրատախտակ, կավիճ, համակարգիչ, ինտերնետ կապ:
Ուսուցման մեթոդներ	Մտազրույց, հարցադրումներ, բացառման, խրախուսում
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաղ «Ճանաչիր խաղաքարերը»
Գնահատում	Միավորային և ձևավորող գնահատում
Կապը Հանրակրթական տարրական ծրագրի Երջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնադրյալներին հետ	S1, S3, S4, S6, S7, S8, S9, S11, S12, S15, S16, S22, S23, S25, S26, S27, S28, S29, S32, S35
<p>Դասի ընթացքը</p> <ul style="list-style-type: none"> ● Հաշվառում, բանավոր հարցում, տնային աշխատանքի ստուգում(2-5 րոպե) ● Նոր նյութի մատուցում. (15 րոպե) ● Տրամադրերի լուծում (15 րոպե) ● Խաղ (8 րոպե) ● Ամփոփում. Հարց ու պատասխանի միջոցով ամփոփել դասը, հանձնարարել տնային առաջադրանք (2րոպե) <p>Թեմային վերաբերող հարցադրումներ</p>	

ԴԱՄԻ ՊԼԱՆ

Դաս 3-4 Խաղաղաբույժ /2ժամ

Ուսուցիչ՝

Մարիամ Մուսեղյան

Առարկա՝ ԾԱԽՄԱՏ	
Դասարան՝ 2-րդ	Ուս. տարի 2023-2024
Դասի նպատակ	Ուսուցանել շախմատի դասերը
Դասի վերջնադրյուններ	Անվանել շախմատի դասերը: Ցուցադրել և անվանել շախմատային գծերը, անկյունագիծ,ուղղածիգ ,հորիզոնական
Ընդհանրական խաչվող հասկացություններ	Կառուցվածք և գործառույթ.Ամբողջական կառուցվածք ընկալելու հմտության ձևավորում, մասնավորապես 'անկյունագիծ,ուղղածիգ և հորիզոնական հասկացությունների ընդհանրացում:
Միջառարկայական կապեր	Մայրենի լեզու - Նորածանոթ հասկացությունները կարդալու, դրանք մտապահելու, սեփական մտքերը գրագետ, տրամաբանված, համոզիչ և հակիրճ արտահայտելու կարողություն: Մաթեմատիկա - Խաղաղաբույժի մոտավոր արժեքներով բնութագրող պարզ գործողություններ կատարելու կարողություն: Ձևավորել խնդրի պայմանը և պահանջը բացահայտելու և լուծելու կարողություն: Արվեստ - Նորը ստեղծելու կարողություն:
Կապը Հանրակրթական տարրական ծրագրի Երջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնադրյունների հետ	S1, S3, S4, S6, S7, S8, S9, S11, S12, S15, S16, S22, S23, S25, S26, S27, S28, S29, S32, S35
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագիրք, վարժությունների տետր, գրատախտակ, կավիճ, ցուցատախտակ, խաղատախտակ, խաղաղաբույժ, համակարգիչ, ինտերնետ կապ:
Ուսուցման մեթոդներ	Պատմում, հարց ու պատասխան, բացառման, խաղ

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաղ.«Գտիր խաղաֆարի տեղը» Խաղ. « Անվանիր դաշտը և գտիր գիծը»
Գնահատում	Միավորային և ձևավորող
<p>Դասի ընթացքը</p> <ul style="list-style-type: none"> ● Հաշվառում, բանավոր հարցում, տնային աշխատանքի ստուգում(2-5 րոպե) ● Նոր նյութի մատուցում . Աշակերտներին հիշել տալ շախ, մատ թեմաները, ուղղորդել, որպեսզի կարողանան մատային դիրքեր ստեղծել: (15 րոպե) ● Տրամագրերի լուծում (15 րոպե) ● Խաղ. Գտնել խաղաֆարի տեղը,անվանել դաշտերը (8 րոպե) ● Ամփոփում . Հարց ու պատասխանի միջոցով ամփոփել դասը, հանձնարարել տնային առաջադրանք (2րոպե) <p>Թեմային վերաբերող հարցադրումներ</p> <p>Ի՞նչ է Շախմատը:</p> <p>Ի՞նչ է դաշտը:</p> <p>Խաղատախտակը բանի դաշտից է բաղկացած:</p>	

Գրականության ցանկ

Սամվել Միսակյան. Մեթոդական ուղեցույց 2-4 երևան 2013
Համլետ Թումանյան ուսուցչի ձեռնարկ երևան 2011
Նախաշավիղ 2017
Սամվել Միսակյան Ուսումնամեթոդական ձեռնարկ երևան 2018